

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրինա ԲՈԽՈՆԱԶՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՐԵՆ ԱՅՋԼԻՒ ԱՐՁԱԿՈՒՄ

Ամերիկացի ականավոր գրող-էսեիստ Լորեն Այզլիի (1907-1977) ստեղծագործությունն ը բարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով, իսկ ԱՄՆ-ում հեղինակն արդեն այսօր համարվում է դասական: Ակգրքնական շրջանում, եթե Լորեն Այզլին՝ որպես անվանի մարդաբան, դեկավարում էր Փենսիվանիայի համալսարանի մարդաբանության ամբիոնը, նրա հետաքրքրությունների կենտրոնում ավելի շուտ գիտությունն էր և ոչ թե գրականությունը: Միևնույն ժամանակ, նա հսկայական նշանակություն էր տալիս խոսքին՝ հասկանալով դրա զորությունը: Գիտական միտքը պահանջում էր խիստ տրամաբանություն, սակայն հնարավորություն չէր տալիս Այզլին ամբողջապես բացահայտել իր աշխարհայացքը. նա հասկանում էր, որ գիտությունը ներկայացնում է աշխարհը որպես սխեմա, իսկ գրականությունն ու արվեստը բացահայտում են նրա մեջ կյանքը: Սա է պատճառը, որ գիտական հետազոտություններին զուգահեռ, Այզլին աստիճանաբար միահյուսում է այն գրական ստեղծագործության հետ: Նա գրում և հրատարակում է մի շարք փոքրիկ էսեներ և պատմվածքներ: Սակայն պահանջվեցին երկար տարիներ, մինչ նրան հաջողվեց անել այն, ինչը իրենից առաջ հաջողվել էր միայն գերմանացի ոռմանտիկ գրողներին՝ իրականացնել գիտական մտքի և ստեղծագործական էներգիայի սինթեզ, «հաշտեցնել» գաղափարների տրամաբանությունը երևակայության տրամաբանության հետ: Այզլին մշակում է գրական շարադրանքի յուրօրինակ ոճ, որը բարձր է գնահատվում Ռ. Բրեդբերիի, Ռ. Օդենի և մի շարք այլ անվանի ամերիկացի գրողների կողմից:

Գրական այն ուղղությունը, որին հաճախ դասում են Լորեն Այզլիին, գրականության պատմության մասնագետները ավանդաբար անվանում են «քննագրություն»: Այդ ուղղության ակունքները գտնում ենք 19-րդ դարի ամերիկացի գրողների և մտածողներ Ռ.

Էմերսոնի և Հ. Տորոյի ստեղծագործություններում, ովքեր դնում էին բնությունը դնում էին փիլիսոփայական մտորումների կենտրոնում: Բացի այդ, իր պատմվածք-էսաներում Այզին պահպանում է ժան Ժակ Ռուստոյից եկող «քնություն-քաղաքակրթություն» հակադրությունը: Ծիշտ է, Այզին որոշ չափով վերափոխում է այդ հակադրությունը ժամանակակից տենտենցներին հաճահունչ և առաջ է քաշում հայեցակարգեր, որոնք արտացոլում են 20-րդ դարի ոգին:

Հեղինակի ուշադրության կենտրոնում նախատեղծ աշխարհն է (բնությունը), որը ոչ մի կերպ կապված չէ գիտակից մարդու նկրտումների հետ: Բանականությունը բաժանեց մարդուն և բնությանը, բայց և միևնույն ժամանակ հաստատեց նրանց միջև եղած փոխհարաբերությունների մի նոր սկզբունք՝ *իշխանության* սկզբունք: Մարդը՝ որպես սուբյեկտ, ձգտելով հաստատվել աշխարհում, յուրացնում է իրեն շրջապատող տարածքը՝ *ենթարկելով* այն իրեն: Բանականությունը դառնում է այդ յուրացման կարևորագույն գործիքը: Բանականությունն է, որ անջատում է բնության մեջ գլխավորը և երկրորդականը. գլխավորը այն ամենն է, ինչ անհրաժեշտ է մարդուն, երկրորդականն այն է, ինչը կարելի է անտեսել: Այսինքն, բանականությունը հասցնում է ամբողջ իրականությունը մի պարզունակ և աղքատիկ սխեմայի: Անվերջ փոփոխական և անկանխատեսելի բնությունը դառնում է մեխանիկորեն կարգավորված մի տարածք, որը մարդիկ անվանում են քաղաքակրթություն. միջավայր, որտեղ մարդն անցկացնում է իր կյանքի մեծ մասը: Այզին իր ստեղծագործությունների մեջ մշտապես կիրառում է *բռնության* (իշխանության) կերպարներ՝ ընդգծելով բանականության ճնշող բնույթը. շրջող պարեկախմբեր, սահմանը հսկող շներ, մեզապղիսի մղջավանջային փողոցներ, որոնցով հարյուրավոր ամերիկացիներ կուռ շարքերով քայլում են աշխատանքի, ինչպես գերճանական վերմախտի (ռազմական ուժերի-հեղ.) զինվորները («Սահը գիշերն է աննկատ վրա հասնում»): Այզիի ստեղծագործությունների մեջ կարեոր տեղ են զբաղեցնում բնաշխարիի բնակիչների ոչնչացման տեսարանները («Ուսկեանիվը»):

Այզիի պատմվածքներում քաղաքակրթությունը հանդես է գալիս որպես խիստ կարգապահական տարածք, որն ինքնին մերժում է ազատության սկզբունքը: Մարդն այստեղ կորցնում է իր անհատականությունը՝ միաձուվելով և «տարրալուծվելով» ամբոխի մեջ: Նա

դառնում է հսկայական մեխանիզմի մի պտուտակ՝ կատարելով այդ մեխանիզմի կողմից կարգադրված գործառույթները: Նրա կյանքը դառնում է կանխատեսելի, քանի որ նա մի ընդհանուր նախագծի մասն է: Այզին գրում է. «Դա մի մարդ էր՝ իր զանգվածային եռթյամբ, ով քայլում էր, ինչպես ոռրոտ, և դառնում հայտնի մեխանիզմների վոխարինվող մաս: Նա գնում է դեպի իր գրաեղանը, իր համակարգիշը կամ դեպի հաստոցը: Նա և իր նմանները շարժվում են դեպի իրենց գիտակցված անողոք վախճանը, ինչպես ալիքները, որպիսիք չի տեսել ոչ մի ծովի ափ» (Այզլի, 1999):

Իր պատմվածք-էսեններում Լորեն Այզին հաճախ է անդրադառնում 18-րդ դարին՝ նրա լրացրչական գաղափարներով: Այդ դարաշրջանում մարդիկ հավատում էին բանականության անսահման հնարավորություններին, ինչով և բացատրվում է գիտության բուռն զարգացումը: Բնությունը նրանց թվում էր ճանաչելի, ընկալելի և բանականորեն բացատրելի: Ըստ այդ ժամանակաշրջանի մտածողների՝ բնության օրենքների բացահայտումը բույլ է տալիս ենթադրել, որ բնությունն էլ մի յուրատեսակ մեխանիզմ է, թեև շատ բարդ: Սակայն բոլոր դեպքերում, նրանց համոզմամբ, բնությունը աշխատում է ըստ որոշակի՝ գիտականորեն բացատրելի կանոններով. «Աշխատելով իրենց արհեստանոցներում՝ մարդիկ անխուսափելիորեն պետք է գային այն եզրահանգման, որ աշխարհը մի մեծ մեխանիզմ է, որը բաղկացած է անվերջ թվով փոքր մեխանիզմներից» (Այզլի, 1994): Լուսավորչական դարաշրջանի մտածողները, ըստ Այզիի, կարծում էին, որ բնության բոլոր գաղտնիքները բացահայտված են, այդ թվում՝ կյանքի ծագման գաղտնիքը: Հենց 18-րդ դարում է, որ գիտությունը փորձեր է ձեռնարկում արհեստական եղանակով կյանք ստեղծելու: 20-րդ դարի գիտնականները նոր միջոցներով կշարունակեն իրենց նախորդների որոնումները («Կյանքի գաղտնիքը»): Հեղինակը անթաքույց հեգնանքով նշում է, որ այդ գիտնականները կարող են հասնել ցնցող արդյունքների. օրինակ, նրանք կարող են այնպիսի մի մերենա ատեղծել, որը ի վիճակի վկինի վերարտադրել քեզ նմաններին («Սկնորսը և Էլեկտրոնային հաշվիչ մեքենան»): Այսպիսով արդեն 20-րդ դարի կեսերին Լորեն Այզին կանխագուշակում է «կլոնի» ստեղծման գաղափարը: Հեղինակը սակայն նշում է, որ մեխանիզմների կողմից ստեղծված իրականությունը արդեն կգործի կանխատեսելիորեն: Այն գերծ կլինի բազմիմաստությունից, փոփո-

խականությունից և բազմառողղվածությունից, իսկ դա նշանակում է, որ նա գործ կլինի կյանքի հիմնական հատկանիշից՝ ազատությունից:

Զարմանալի է այն փաստը, որ Այզլին, լինելով պրոֆեսիոնալ գիտնական, գալիս է այն մտքին, որ գիտական տեսությունները և վարկածները բնության վերաբերյալ ընդհանեն մարդու պատկերացումներն են և բնութագրում են ավելի շուտ հենց մարդուն, քան բնությունը: Մինչդեռ բնությունը իռացիոնալ է, և այն հնարավոր չէ ընկալել տրամարանության միջոցով: Բնությունը շեղփում է ցանկացած համակարգումից և երբեք չի համընկնում այն սխեմայի հետ, որը կիրառում են նրա նկատմամբ, քանի որ այն միշտ գտնվում է կայցման գործընթացի մեջ («Մարդու դարաշրջանը»):

Ուժանոտիկական ավանդույթի ներկայացուցիչները, որոնց վրա հիմնվում է Լորեն Այզլին, նույնպես նշում էին, որ բնությունը հնարավոր չէ ճանաչել տրամարանության միջոցով, և կտրականապես դեմ էին բնության մասին՝ որպես մեխանիզմի պատկերացմանը: Ինչպես և Շելլինգը, նրանք ընդունում էին բնությունը որպես օրգանիզմ, որպես մի մարմնական սկիզբ, որն ունի հոգի: Եվ բնությունը կարելի է ճանաչել ոչ թե բանականությամբ, այլ երևակայությամբ: Միևնույն ժամանակ Այզլիի պատմվածքներում բնությունը անկախ է մարդուց և անտարբեր է նրա նկրտումների հանդեպ: Մարդը, ըստ հեղինակի, հակված է պատկերացնել ինքն իրեն որպես կյանքի բարձրագույն ձև, սակայն իրականում նա բնության բազմաթիվ ձևերից ընդհանենը մեկն է: Ընդ որում, նա մնացած ձևերի մեջ ամենաբարձրը չէ և գոյություն ունի մնացած բոլորին հավասար: Այդ պարզ, և միևնույն ժամանակ խոր միտքը Այզլին արտահայտում է իր «Կյանքի գաղտնիքը» պատմվածք-էսսենում, որտեղ դրվագներից մեկում վարպետորեն ներկայացնում է իր և ուղտափուշի «երկխոսությունը» անտառում («Կյանքի գաղտնիքը», 37):

Այզլին գտնում է, որ մարդու միայնակության զգացումը ծնվում է այն պահին, երբ նա գիտակցում է, որ բնությունը իրենից անկախ է: Ինչպես և ոռմանտիկների մոտ, միայնակությունը միշտ կապված է քաղաքակրթությունից փախչելու և սովորական դարձած պահնդական կապերը խզելու հետ: Այդ պահից մարդը դառնում է ազատ. նա շարժվում է անհայտ ուղղությամբ, որը նման է բնության անկանխատեսելի էվոլյուցիային. «Ուսկե անիվը» պատմվածքի մեջ երեխան,

շգիտես ինչու, նատում է սայլակառը, որը գնում է անծանոք ուղղությամբ: «Գետնատակում» պատմվածքում վաշխնգոտոնյան տարեց այրովեսորը սսորգետնյա անցուի իներ է փորում: «Պարող առնետը» պատմվածքում գործազորկ երիտասարդը բարձրանում է ապրանքատար գնացքի վագոն և գնում ուր կպատահի: Այզիի հերոսների փախուստը, ինչպես և ամերիկացի անվանի գրող Հենրի Թորոյի մենակյաց կյանքը անտառում, պետք չէ հասկանալ որպես քաղաքակրթությունից հեռանալու սոսկ արտաքին ծև: Դա ավելի շուտ «ներքին» փախուստ է, փախուստ ինքը քեզնից, քո եսի այն մասից, որը ձևավորվել է հասարակական կարծրատիպերով: Այդ կարծրատիպերը մշակվել են ոչ թե անհատի կողմից, այլ նրանց, ովքեր դաստիարակում և շրջապատում են նրան: Մարդու գոյությունը մշակութային տարածքում անհատական գոյություն չէ. այն իրականացվում է այլոց հետ համատեղ և պահանջում է վերջիններիս աջակցությունը: Իսկ մարդու ճանապարհը դեպի ազատությունը, ըստ Այզիի, դա զուտ անհատական որոնում է, որտեղ ուրիշի աջակցությունը հնարավոր չէ: Իր պատմվածքներում հեղինակը ներկայացնում է երկակի ընդդիմություններ, որտեղ մշակույթի աշխարհին վերաբերող կատեգորիաները հակադրվում են բնույթան աշխարհի հետ կապված կատեգորիաներին. մշակույթ-բնույթուն, գիտակցություն-մարմին, լույս-մքություն, կարգավորվածություն-քառ, աղմուկ-լոռություն, վերջնական-անվերջ, կոլեկտիվ կյանք-մենություն, հիմք-անդունք: Այս հակադրությունները միանգամայն բացատրելի են: Մշակութային կարծրատիպերի լույսի ներք իրականությանը ուղղված հայցը ենթադրում է վերջինիս ըմբռնելիությունը, անշարժությունը, դրա սահմանների որոշակիությունը: Իրականությունը կարգավորված է, և այն հնարավոր է չափել ժամանակային և տարածային կատեգորիաներով: Նրա բոլոր երևոյթները տեսանելի են մակերեսի վրա և բացատրելի բանականությամբ: Այդ պատճառով Այզին համարում է, որ մշակույթը իր իշխանությունը իրականացնում է ցերեկով. այդ ժամանակ լսելի են բազմարիվ ձայներ, որոնք, միասին վերցրած, հնչում են որպես մեկ ընդհանուր միապաղադ աղմուկ. «Աղմուկը Արտաքին աշխարհ է, դա հարևանի շարաճճի տղա է, որի տան կողքով պետք է գնաս դպրոց: Աղմուկը այն ամենն է, ինչը որ չես ուզում անել... Աղմուկը ցերեկ է» («Թնի բափահարումը», 26):

Իսկ երբ ազատ մարդու աչքերով ես նայում աշխարհին, այն հնարավոր չէ ըմբռնել վերջնականապես: Այն ներկայանում է քառ-սային տեսքով և գտնվում է անվերջ կայացման մեջ: Այզին այն կարծիքին է, որ բնությունը միշտ պետք է ներկայանա որպես օտար մի բան, հազիվ տարրերակելի: Իսկական, բնական կյանքը միշտ ընկղղված է մթության և լրության մեջ: Այդ է պատճառը, որ կյանքն իր իշխանությունը իրագործում է միայն գիշերով, երբ բոլոր տարրերը կորցնում են իրենց հստակ ուրվագծերը և դառնում անորոշ ու աղոտ: Ժամանակը և տարածությունը ասես նոյնապես անհետանում են: Անվերջությունը, անորոշությունը ձգում է մարդուն դեպի իրեն՝ ստիպելով նրան թափառել գիշերային անտառում, իջնել նկուղների մրության մեջ, ուղիներ որոնել ստորգետնյա լաբիրինթոսներում: Մարդը ձգուում է վերացնել սեփական սահմանները և իր մեջ բացահայտել անսահմանությունը:

«Գետնատակում» պատմվածքի մեջ հերոսի ստորգետնյա ուղևորությունը կարելի է ընկալել որպես ներքափանցում սեփական եսի խորքերը, նրա ձգուում՝ աշխարհի ուսցիոնալ ընկալումը հաղթահարելու: Ուսցիոնալ եսի հաղթահարումը միևնույն ժամանակ նշանակում է դադարել մշակույթի սուրեկտ լինելուց: Մահվան կանխագացումը մարդու մեջ փախ է առաջացնում, և նա արդեն հրաժարվում է անհայտ ուղղությամբ (բնություն) գնալուց և ցանկանում է վերադառնալ դեպի սովորականը, մշտականը (մշակույթ): Հենց այդ զգացումն է համակում «Գետնատակում» պատմվածքի հերոսին: Հայտնի գետնի տակ, որտեղ ջրի հոսանքը գնալով ահազնանում է, նա հանկարծ գիտակցում է, որ սեփական կյանքը ենթարկում է մահացու վտանգի: Սակայն մի անընդունելի հետաքրքրասիրություն է առաջանում նրա մեջ, որը մի պահ խլացնում է մահվան ճայնը. նա շարունակում է իր ուղին գետնատակում, պայքարելով մահաբեր ջրի հոսանքի (բնության տարերք) դեմ: Հանգստության զգացումը վերադառնում է նրա մոտ միայն այն ժամանակ, երբ նա դիտահորի միջով դրւու է գալիս փորդց և կրկին հայտնվում քաղաքակրթության աշխարհում՝ ցերեկային լույսի, ջերմության և հարմարավետության աշխարհում («Թևի թափահարումը», 46):

Այզիի պատմվածքներից կարելի է եզրակացնել, որ մարդու միաձուլումը բնության հետ հնարավոր է միայն այն դեպքում, եթե արթնացնես նրա նեց բնական սկիզբը, այն ազդակները, որոնք

գտնվում են աճագիտակցականի ոլորտում։ Ինչպես և գարնանային հողի մեջ, նրա մարմնում ևս պետք է արթնանա ստեղծագործ էներգիան, և մարմինը վերածնվի նոր կյանքի հանար:

Լորեն Այզլիի ստեղծագործությունները իրենց կառուցվածքով կրում են դրվագային բնույթ։ Դրանցից յուրաքանչյուրը, որպես կանոն, ձևավորվում է մի քանի տեսարաններից, որոնք իրենց ժամանակին բնույթով կարող են լինել բոլորովին տարբեր։ Որոշ դրվագներ հիշեցնում են հրատապ սյուժե ունեցող պատմվածքներ, մյուսները ներկայանում են որպես իմարեսիոնիստական պատկերումներ։ Որոշ այլ դրվագներ հիշեցնում են գիտահանրամատչելի էսսեներ։ Հաճախ հեղինակի մոտ ժամանակին տարբեր ձևեր միահյուսվում են իրար։ Նման «հիբրիդներ» ստեղծելու Այզլիի հակումը դարձնում է նրա աշխարհը անկանխատեսելի, մշտապես կայացման մեջ գտնվող, նման այն բնությանը, որը կենտրոնական տեղ է զբաղեցնում այդ իսկ ստեղծագործություններում։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Айзли Л. Тайна жизни. СПб.: Изд-во Санкт-Петербургского ун-та, 1999.
2. Айзли Л. Взмах крыла. Рассказы и эссе. Москва: Изд. МГУ, 1994.

И. БУРНАЗЯН – Противостояние цивилизации и природы в прозе Л. Айзли. – В данной статье рассматривается сопоставление цивилизации и природы в произведениях писателя-эссеиста Л.Айзли. В своих работах автор выступает последователем гуманистических традиций Эмерсона и Торо. Л.Айзли заставляет читателя задуматься о взаимоотношении человека с природой, о хрупкости жизни и окружающего нас мира.

I. BOORNAZYAN – Confrontation of Civilization and Nature in L. Eiseley's Prose. – The present article is an attempt to discuss the contrast of civilization and nature in the works of L.Eiseley. The author is a follower of humanistic traditions of Emerson and Thoreau. Eiseley's readers can't help thinking about the interrelation between the man and nature as well as frailty of life and environment.